Արձանագրություն N2
ՎԾ-ՇՀԱՊՁԲ-15/15-16/7 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով
«Քիմիական նյութերի» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի
բացման նիստի

ք.Վեդի

15.04.2016թ
ժ.11: 00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գաբրիելյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մաթևոսյանը, Մ. Սիմոնյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ամիրջանյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվան, ժամի մասին

---

(Գ. Գաբրիելյան)

Գնային առաջարկների հայտերը բացվել են «Վեդու ծննդատուն» ՓԲԸ շենքում, ք.Վեդի, Գայի 1 հասցեում, ծանուցման օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեները, տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին
(Գ. Գաբրիելյան)

1. Համաձայն սահմանված կարգի ապրիլի 6-ին ծանուցվել են շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված բոլոր կազմակերպություններին:

2. Գնայի նառաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հասցեն, հեռախոսի համարը |
|---|---|---|
| 1 | «Դելտա» ՍՊԸ | Ք.Երևան, Կոմիտասի 49/4, հեռ. (010)23-08-51, 20-72-62 |
| 2 | «ԷՄԴԻ ընդ ԴԻ ԸԼԱՅՆԵՍ» ՍՊԸ | Ք.Երևան, Ղ. Փարպեցու 22/14, հեռ. (010)53-32-65, 53-15-00 |
| 3 | «Մեդիտեք» ՍՊԸ | Ք.Երևան, Ծ. Իսակովի 22/3, հեռ. (010)56-01-10 |
| 4 | «Վիոլա» ՍՊԸ | Ք. Երևան, ավան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3, հեռ. (010)62-80-21 |

2.1 Բոլոր մասնակիցների հայտերի ծրարները կազմված են հրավերով սահմանված կարգին համապատասխան;

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0

2.2 ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված մյուս կազմակերպությունների կողմից գնային առաջարկի ծրարներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:

3.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին
(Գ. Գաբրիելյան)

Մասնակիցների գնային առաջարկներում պահանջվող փաստաթղթերը առկա են: Բոլոր մասնակիցների ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գների մասին
(Գ. Գաբրիելյան)

Ընդունել ի գիտություն, որ
Կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն է

| Հ/Հ | Մասնակցի տվյալները | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | «Դելտա» ՍՊԸ | | «ԷՄԴԻ ընդ ԴԻ ԸԼԱՅՆԵՍ» ՍՊԸ | | «Մեդիտեք» ՍՊԸ | | «Վիոլա» ՍՊԸ | | Նախահաշվային գինը |
| | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | |
| 1 | 420000 | 00.0 | 437325 | 87675 | 568751 | 113750 | 346500 | 00.0 | 735 000 |
| 2 | 36000 | 00.0 | 24667 | 4933 | 23333 | 4667 | 26000 | 0.00 | 36 000 |

4.1 Հաշվի առնելով, որ առաջին տեղ գրված մասնակիցների գնային առաջարկները չեն գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:

5. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ՎԾ-ՇՀԱՊՁԲ-15/15- 16/7 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարել 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ– 0:

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- «Վիոլա» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ գրված մասնակից 1-ին չափաբաժնի մասով:
- «Մեդիտեք» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ գրված մասնակից 2-րդ չափաբաժնի մասով:
- «Դելտա» ՍՊԸ-ին ճանաչել երկրորդ տեղ գրված մասնակից 1-ին չափաբաժնի մասով:
- «ԷՄԴԻ ընդ ԴԻ ԸԼԱՅՆԵՍ» ՍՊԸ-ին ճանաչել երկրորդ տեղ գրված մասնակից 2-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:

7. ՎԾ-ՇՀԱՊՁԲ-15/15-16/7 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն 1-ին և 2-րդ տեղ գրված մասնակիցների մասով ներկայացնել հարցում ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

8. Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Իսկ «Վիոլա» ՍՊԸ-ին համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. Փետրվարի 10-ի N 168-Ն որոշման կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ 1-ին չափաբաժնի մասով գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից չհիմնավորված ցածր գնային առաջարկ ներկայացնելու պայմանով: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող օրը ժամը 11:00-ին, «Վեդու ծննդատուն» ՓԲԸ, ք.Վեդի, Գայի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ–3, դեմ– 0:

**10. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:**

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ.Գաբրիելյան

անդամներ՝ _____ Ն. Մաթևոսյան

_____ Մ. Սիմոնյան

քարտուղար՝ _____ Գ. Ամիրջանյան